



Մամուլի հաղորդագրություն

Հայաստանցիները կարծում են՝ վերջիվերջո ամեն ինչ լավ է լինելու:

ԵՐԵՎԱՆ, 30 հուլիսի, 2020: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)– Հայաստան հիմնադրամն այսօր ներկայացրեց իր լայնածավալ «Կովկասյան բարոմետր» 2019թ հետազոտությունը: Ներկայացվեցին հետազոտության մեթոդաբանության մանրամասները, հիմնական արդյունքները, ինչպես նաև վերլուծական համեմատականներ նախորդ տարիների «Կովկասյան բարոմետրի» տվյալների համադրմամբ:

2004 թվականից իրականացվող «Կովկասյան բարոմետր» հանրային կարծիքի հետազոտությունը բացառիկ տեղեկություններ է պարունակում հարավկովկասյան երկրների սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների մասին: 2019թ ևս փորձ է արվել բացահայտելու հանրային կարծիքը ինչպես կրթության, զբաղվածության, հանրային ինստիտուտների, այնպես և վերջին երկու տարիների ուշագրավ իրադարձությունների՝ Թավշյա հեղափոխության, դրան հաջորդած վերափոխումների, բնակչության քաղաքական նախասիրությունների և այլ արդի հիմնախնդիրների վերաբերյալ:

«Կովկասյան բարոմետրը (ԿԲ) տարածաշրջանային հետազոտություն է, որն իրականացվում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ծրագիրը նպատակ ունի ուսումնասիրել տարածաշրջանում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքը: Հարցման առաջին փուլն իրականացվել է 2004թ-ին երեք երկրների մայրաքաղաքներում: 2006թ-ից հետազոտությունն ընդգրկում է ինչպես մայրաքաղաքներն, այնպես էլ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերը: 2015թ-ից հետո ԿԲ-ն իրականացվել է միայն Հայաստանում և Վրաստանում:»,— միջոցառման բացման խոսքում ասաց ՀՌԿԿ–Հայաստանի գործադիր տնօրեն Սոնա Բալասանյանը:

«Տեղեկատվական այս դարում շատ կարևոր է փաստերի և հավաստի տեղեկատվության հավաքագրումը: Պատահական չէ, որ ՀՀ կառավարությունը կարևորում է փաստահենք քաղաքականության մշակումը: Հատկապես կարևորում են կենտրոնի այս հետազոտությունը, որովհետև այն կապված է մեր երկրում կայացած կարևոր իրադարձությունների հետ: Ուսումնասիրվել են քաղաքացիների կարծիքը, հասարակական դիտարկումները, մտահոգություններն են վերհանվել, ինչը նշանակում է, որ կենտրոնը հետևողական է արդի հիմնախնդիրների վերհանմանը, ձեռքը պահում է հասարակության զարկերակին:»,— իր ողջույնի խոսքում նշեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Չարուհի Բաթոյանը:



«Այս ժամանակներում հատկապես կարևորում են օբյեկտիվ տվյալների առկայությունը, որպեսզի հասարակական կազմակերպությունները, Հայաստանի կառավարությունը և այլ որոշումներ կայացնողները կարողանան կայացնել տվյալահեն որոշումներ: Շատ ուրախ եմք ՀՌԿԿ-Հայաստանի հետ այս երկար պատմություն ունեցող ծրագրի շրջանակներում համագործակցել, քանի որ այն յուրահատուկ է հարավային կովկասում երկրների միջև տվյալների համեմատականներ անցկացնելու, զուգահեռներ տանելու տեսանկյունից:»,— իր խոսքում նշեց Կովկասյան բարոմետրին աջակցող Ժողովրդարության ազգային հիմնադրամի ծրագրերի ղեկավար Էլսփեթ Սադըրսը:

«Դժվար է թերազնահատել Կովկասյան բարոմետր հետազոտության արդյունքում ձևավորված տվյալների բազայի դերը մեր՝ հետազոտողներիս կողմից կատարվող հետազոտական աշխատանքներում: Կովկասյան բարոմետրի տվյալների բազան շատ եզակի և յուրահատուկ է իր մեջ պարունակող ինֆորմացիայի տեսակետից, և հնարավորություն է ստեղծում հետազոտել հարցեր, որոնց պատասխանները հետաքրքիր են ոչ միայն հայաստանյան կամ կովկասյան, այլ նաև ավելի լայն՝ միջազգային կոնտեքստում:»,— իր ողջույնի խոսքում ասաց Քուրթինի համալսարանի ասոցացված պրոֆեսոր Աստղիկ Մավիսակալյանը:

Հատկանշական են հարցման մասնակիցների 2018թ ապրիլյան իրադարձություններից սպասելիքների և դրանց արդարացման համեմատությունները: Հայաստանցիների 84%-ը դրական սպասելիքներ է ունեցել «Թավշյա հեղափոխությունից», որոնցից 76%-ը համարում է այդ սպասելիքները լիովին կամ մասամբ արդարացված:

Հայաստանցիները փոխել են նաև Հայաստանի ժողովրդավար լինելու մասին իրենց կարծիքը: Եթե 2017թ հարցման մասնակիցների միայն 53%-ն էր Հայաստանը համարում ժողովրդավարական երկիր, ապա 2019թ 85%-ն է այդպես կարծում: 2019թ հարցման մասնակիցների 80%-ը կարծում է, որ Հայաստանում վերջիվերջո ամեն ինչ լավ կլինի, մինչդեռ 2017թ միայն 47%-ն էր այդպես կարծում:

Բանակի նկատմամբ վստահությունը շարունակում է ամենաբարձրը մնալ հայաստանցիների մոտ. հարցվածների 88%-ը ավելի շատ կամ լիովին վստահում է բանակին: Հակառակ պատկերն է դատարանների հարցում, որոնց չի վստահում հարցվածների 48%-ը, ընդ որում 61%-ը համարում է, որ դատական համակարգը կողմնակալ է որոշ կամ բոլոր քաղաքացիների նկատմամբ:

Հայաստանցիները շարունակում են Ռուսաստանը համարել Հայաստանին ամենաբարակեմական երկիր. այդպես է համարում հարցվածների 57%-ը: Ֆրանսիան ամենաբարեկամական երկիր է համարում հարցվածների 12%-ը, իսկ 17%-ը համարում է, որ ոչ մի երկիր Հայաստանի ամենաբարեկամական չէ:

Հետազոտության այլ մանրամասներ հասանելի են ՀՌԿԿ-Հայաստանի և «Կովկասյան բարոմետրի» կայքերում:



ՀՌԿԿ-Հայաստանի մասին

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստանն իր գործունեությունն սկսել է 2003 թվականին՝ որպես Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում հիմնված Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ցանցի մաս: Երկար տարիներ զարգանալով Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համազործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի աջակցությամբ՝ 2013թ ՀՌԿԿ-Հայաստանն ստացել է անկախ հիմնադրամի կարգավիճակ՝ շարունակելով հետամտել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը խթանելու հիմնական առաքելությունը:

www.crrc.am

«Կովկասյան բարոմետրի» մասին

«Կովկասյան բարոմետրը» Հարավային Կովկասի երկրներում տևային տնտեսությունների տարածաշրջանային հարցում է, որն իրականացվում է 2004թ-ից (2004–2010թթ կոչվել է «Տվյալների նախաձեռնություն»): 2015, 2017 և 2019 թվականներին հարցումներն իրականացվել են միայն Հայաստանում և Վրաստանում: ՀՌԿԿ տվյալների ազատ հասանելիության սկզբունքին համապատասխան, «Կովկասյան բարոմետրի» տվյալադրամները, ինչպես նաև տվյալների առցանց վերլուծության գործիքը ազատորեն հասանելի են հետազոտողների և բոլոր հետաքրքրվողների համար:

«Կովկասյան բարոմետրի» 2019-2020թթ հետազոտությունն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն(ՀՌԿԿ)-Հայաստան հիմնադրամի կողմից՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի աջակցությամբ:

Մինչ այս հետազոտությունը ֆինանսավորվել է Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի կողմից:

www.caucasusbarometer.org